ք. Երևան «26» մարտի 2026 թ.

Ծանուցում

"Հարավկովկասյան երկաթուղի" ՓԲԸ
ՎԼ10 էլեկտրական լոկոմոտիվների ՏԼ-2Կ1 քաշող շարժիչների կապիտալ վերանորոգման պայմանագիր կնքելու իրավունքի մասին
Առաջարկությունների հարցում
թիվ ՀԿԵ-ԱՀ 026/005 ծածկագրով

կ/կ	Գնման գործընթացի չափանիշներ	Գնման պայմաններ
1.	Գնման տարբերակ	Առաջարկությունների հարցում՝ թղթային տարբերակով
2.	Գնման գործընթացի կազմակերպողի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային հեռախոսահամար	Կազմակերպող՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գնումների կազմակերպման բաժին (հետագայում՝ «ՀԿԵ» ՓԲԸ ԳԿԲ) Գտնվելու վայրը՝ 0005, ք.Երևան, Տիգրան Մեծի 50 Փոստային հասցե՝ 0005, ք.Երևան, Տիգրան Մեծի 50 Էլեկտրոնային փոստ՝tender@railway.am Կոնտակտային հեռախոս՝ +374 (60) 46-31-74
3.	Գնման առարկան, մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, ծառայությունների ծավալը	ՎԼ10 էլեկտրական լոկոմոտիվների ՏԼ-2Կ1 քաշող շարժիչների կապիտալ վերանորոգում ՝12 հատ ընդհանուր քանակով:
4.	Ապրանքի մատակարարման, կատարվող աշխատանքների, ծառայությունների վայրը և ժամկետները	**Ծառայությունների մատուցման վայր՝** կատարողի տարածք: **Ծառայությունների մատուցման ժամկետ՝** սարքավորումները վերանորոգման ստանալուց ոչ ավելի, քան 120 օրացուցային օր:
5.	Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) կամ ապրանքի միավորի, աշխատանքի, ծառայության արժեքը	Մեկնարկային (առավելագույն) գինը - 12 հատի համար կազմում է՝ 148 700 602,80 (հարյուր քառասունութ միլիոն յոթ հարյուր հազար վեց հարյուր երկու) ՀՀ դրամ և ութսուն լումա առանց ԱԱՀ կամ 178 440 723,40 (հարյուր յոթանասունութ միլիոն չորս հարյուր քառասուն հազար յոթ հարյուր քսաներեք) ՀՀ դրամ և քառասուն լումա ներառյալ ԱԱՀ կամ 29 799 720,00 (քսանինը միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր քսան) ՌԴ ռուբլի առանց ԱԱՀ կամ 35 759 664,00 (երեսունհինգ միլիոն յոթ հարյուր

		հիսունհինը հազար վեց հարյուր վաթսունչորս) ՌԴ ռուբլի ներառյալ ԱԱՀ : ***«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ կարող է վճարում կատարել միայն ՀՀ դրամով կամ ՌԴ ռուբլիով:***
6.	Տեղեկատվություն հայտի ապահովման կիրառման չափի, կարգի և ժամանակի մասին (ներառվում է հաճախորդի / գործառնական հաճախորդի պահանջով) «ՀԿԵ» ՓԲԸ	Հայտի ապահովում չի տրամադրվում
7.	Գնման փաստաթղթերի ներկայացման վայրը, կարգը և ժամկետը	Փաստաթղթերը տեղադրվում են "ՀԿԵ"ՓԲԸ կայքում: Փաստաթղթերը հասանելի են "ՀԿԵ" ՓԲԸ կայքում առանց սահմանափակումների հրապարակման պահից:
8.	Գնմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի սկզբի կարգը, ամսաթիվը, ամսաթիվը եւ ժամկետը:	Հայտերը ներկայացվում են երկու փակ ծրարներով՝ "Բնօրինակ" և "Պատճեն" հստակ մակնշմամբ: Հայտերի ներկայացման սկիզբ՝ ծանուցման հրապարակման պահից կայքում – 2026թ. մարտի «26» (աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00, ընդմիջում՝ 13:00-ից 14:00 (տեղական ժամանակով)): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 2026թ. ապրիլի «30», (աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00, ընդմիջում՝ 13:00-ից 14:00 (տեղական ժամանակով); 2026թ. ապրիլի «30», 09:00-ից 17:00, ընդմիջում՝ 13:00-ից 14:00): Ծրարները՝ մինչև գնումների կազմակերպչին հանձնելը (ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 50 հասցեով՝ "ՀԿԵ" ՓԲԸ-ի կենտրոնական մուտքը) ենթակա են գրանցման "ՀԿԵ" ՓԲԸ անվտանգության ծառայության:
9.	Գործընթացից հրաժարվելու իրավունքը	«ՀԿԵ» ՓԲԸ-ն իրավունք ունի չեղյալ համարել մրցակցային գնումը գնման մեկ և ավելի առարկայի (լոտի) մասով մինչև մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ամսաթիվը և ժամկետի ավարտի ժամը և հավակնորդներին մասնակցությանը թույլատրելու վերաբերյալ որոշումն ընդունելը, չկրելով ոչ մի պատասխանատվություն ցանկացած

		ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև, որոնց այդպիսի գործողությունը կարող է վնասներ պատճառել, ինչպես նաև փոփոխել գնման գործընթացի անցկացման վերաբերյալ ծանուցումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից 1 օր առաջ:
10.	Տեղեկատվություն՝ մրցակցային գնումների փաստաթղթերում նշված պահանջներին չբավարարելու մասին	«ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է մերժել ներկայացված հայտերը եթե. 1) հայտը չի համապատասխանում առաջարկությունների հարցման անցկացման մասին փաստաթղթերում նշված պահանջներին 2) մասնակցի կողմից տրամդրվել է փաստաթղթերի ոչ լրիվ փաթեթ կամ փաստաթղթերը ձևակերպված են առաջարկությունների հարցման անցկացման փաստաթղթերի պահանջներին ոչ համապատասխան 3) նշվել է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի ավելի բարձր գին քան պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի սկզբնական (առավելագույն) գինը (եթե այդպիսի գին սահմանված է) 4) հայտի դրույթերի պարզաբանումների բացակայություն (պատվիրատուի պահանջի դեպքում, եթե այդպիսի պահանջ ուղարկվել է մրցակցային գնման փաստաթղթերին համապատասխան) 5) առաջարկությունների հարցման անցկացումից հրաժարվելը 6) առաջարկությունների ներկայացման ժամկետը լրանալուց հետո առաջարկության հարցմանը մասնակցության առաջարկության (հայտի) տրամադրում:
11.	Առաջարկությունների հարցման մասնակիցներին ներկայացվող պահանջները և գնումների մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ցանկը՝ սահմանված պահանջներին նրանց	Մասնակիցը պետք է համապատասխանի պարտադիր պահանջներին, մասնավորապես՝ 1. Մասնակցի՝ իրավաբանական անձի լուծարում չիրականացնելը և մասնակցին՝ իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը անվճարունակ (սնանկ) ճանաչելու և մրցութային վարույթ բացելու

	համապատասխանությունը հաստատելու համար.	մասին դատարանի որոշման բացակայությունը: 2. Հայտ ներկայացնելու օրվա դրությամբ մասնակցի գործունեությունը կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով չկասեցնելը, ինչպես նաև մասնակցի գույքի վրա կալանքի բացակայությունը, 3.Մասնակցի մոտ հարկերով, գանձումներով, տույժերով, հարկային սանկցիաներով ապառքների, ինչպես նաև բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեներում այլ պարտադիր վճարների և պետական արտաբյուջետային հիմնադրամներ պարտադիր վճարների (բացառությամբ այն գումարների, որոնց մասով տրամադրվել են տարկետումներ, տարաժամկետումներ, ներդրումային հարկային վարկ հարկերի և գանձումների մասին կիրառելի օրենսդրությանը համապատասխան, որոնք վերակառուցվել են կիրառելի օրենսդրությանը համապատասխան, որոնցով առկա է օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ այդ գումարների վճարման գծով հայտարարտուի պարտականությունը կատարված ճանաչելու մասին կամ որոնք ճանաչվել են որպես անհուսալի հարկերի և գանձումների մասին կիրառելի օրենսդրությանը համապատասխան գանձելու համար) գծով ժամկետանց պարտավորությունների բացակայությունը, 4. Անբարեխիղճ մատակարարների գրանցամատյաններում մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների բացակայություն:
12.	Ապրանքի, աշխատանքի, ծառայության վճարման ձևը, ժամկետները և կարգը	Վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ կոնտրագենտի հաշվարկային հաշվին դրամական միջոցների փոխանցման միջոցով՝ մատուցված աշխատանքների (ծառայությունների) հանձնման-ընդունման Ակտը ստորագրելուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա: Մրցակցային գնումների պայմաններով նախատեսված է կանխավճար պայմանագրի

		ընդհանուր գումարի 0% մինչև 50% չափով (ոչ ավելի), փոխանցվում է Կապալառուի հաշվին պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա:
13.	Պայմանագրի կնքման ժամկետը	Գնման գործընթացի արդյունքներով կազմված մրցութային հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության ստորագրման օրվանից հաջորդող 10 օրվանից ոչ շուտ և 20 օր ոչ ուշ: